ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.10.2017թ.
ժամը 11 ^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,

ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության ԲՀԱ բաժնի ԲՀԱ ղեկավարման բաժանմունքի ավագ սպա, մայոր Ա. Օհանյան,

ՀՀ ՊՆ ՌՌ հատուկ օպերատիվ ծառայության բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Սաքի»** և **«Մաքս Պրինտ»** ՍՊԸ-ների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Սաքի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում ներառված չէ տեխնիկական բնութագրին կից ներկայացված ծանոթագրությունում հրավերի պարտադիր պահանջ հանդիսացող դրույթները.

-Ապրանքները լինեն նոր և չօգտագործված:

-Ապրանքների բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

-Սահմանվում է երաշխիք մեկ տարի:

-Մատակարարումը՝ ք.Երևան, Հասրաթյան 5 հասցեով, մատակարարի կողմից:

«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն.

1. Ձեր կողմից ապրանքի անվանում դաշտում 15-ից մինչև 20-րդ չափաբաժիններում (ՀՀ ԶՈՒ)-ի փոխարեն նշված է (ՀՀ ՊՆ):
2. 8- ից մինչև 20-րդ չափաբաժիններում ապրանքի անվանումը և ներկայացված տեխնիկական բնութագիրը սխալ է ներկայացված, անվանումը չի համապատասխանում ներկայացված տեխնիկական բնութագրին:
3. 1-ին չափաբաժնում տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերի՝ մասնավորապես հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի 2-րդ պարբերությունը ներառված չէ. (Քարոզչական նյութերի բովանդակությունն ու թեմատիկական ուղղվածությունը տրամադրվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից /թղթային/: Տառերի տեսակը, չափսը և նկարների չափսերը կարող են տարբերվել կախված նյութի ծավալից, ուստի նախապես համաձայնեցվում են պատասխանատու ստորաբաժանման հետ, /բովանդակությունը, թեմատիկան տրամադրվում է հրավերի կից **նկար 1-ով, 1.1, 1.2 A4 չափսով**/: Կատարողի իրականացրած դիզայնը /ըստ պահանջի մասնագիտական թարգմանություն, խմբագրություն, շարվածք, բովանդակության հերթականություն և ընտրված նկարներ/ համաձայնեցվում է պատասխանատու ստորաբաժանման հետ:)
4. Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում ներառված չէ տեխնիկական բնութագրին կից ներկայացված ծանոթագրությունում հրավերի պարտադիր պահանջ հանդիսացող դրույթները.

Ապրանքները լինեն նոր և չօգտագործված:

9-ից 20-րդ չափաբաժիններում նախատեսված ապրանքների բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Տեխնիկական բնութագրում նշված նկարները ներկայացված են հրավերի կից ֆայլերով:

Բոլոր չափաբաժինների համար սահմանվում էերաշխիք մեկ տարի:

Առաջին չափաբաժնում նախատեսված ապրանքների խոտաները վերացվում են տեղակայման վայրում կապարողի ուժերով և միջոցներով՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից նշված ժամկետում:

Մատակարարումը՝ ք.Երևան, Հասրաթյան 5 հասցեով, մատակարարի կողմից:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը պահանջելով շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

23.10.2017թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները՝ սահմանված ժամկետում **«Սաքի»** և **«Մաքս Պրինտ» ՍՊԸ**-ների կողմից ներկայացվել են մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19 և 20-րդ չափաբաժիններում **«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ**-ին, իսկ 7-րդ չափաբաժնում **«Սաքի» ՍՊԸ**-ին և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-3/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

Գնահատող, (ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող,	Գ. Ուստյան
Գնահատող,	Ս. Նիկոլյան
Գնահատող	Ա. Օհանյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան